

ԱՐՇԱԿ ՏԻԳՐԱՆՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՅՑԸ ԿԱՐԲԻ ԳՅՈՒՂԻ Վ. ԹԵՔԵՅԱՆ ԴՊՐՈՑ

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐԱԴՅԱՆ, *Հայաստանի Թեքեյան մշակութային միության վարչության անդամ*

Լուս Անշեղեսի Արշակ Տիգրանյան վարժարանի շրջանավարտների այս տարվա երկրորդ խումբը մայր հայրենիք այցելեց հունիսի 23-ից հուլիսի 5-ը:

Վարժարանի ուսուցչուհիներ օրիորդ Նանոր Մարգարյանի եւ տիկին Լուսինե Ասատրյանի ղեկավարությամբ 22 շրջանավարտներ մեծ կյանք մտնելուց առաջ երկշաբաթյա շրջագայության նպատակով այցելեցին Հայաստան:

Հայրենի երկրի պատմամշակութային վայրերը չափազանց մեծ տպավորություն թողեցին նրանց վրա. հատկապես՝ Սեւանա լիճը, որն իր կապույտ ջրերով ու Աղթամար թերակղզու բարձունքին թառած հնօրյա վանքի պատկերով իրավամբ գերեց նրանց:



Նրանք հիացմունքով շրջեցին մայրաքաղաք Երեւանում, դիտեցին հայկական ճարտարապետության հին ու նորը պարունակող հոյակերտ Հյուսիսային պողոտան, հանրապետության հրապարակը: Յուրաքանչյուրն իր մեջ հարազատ ու տաք մի մաս

Էր զգում: Նրանց կրակոտ ու կայտառ աչքերը կարծես ասում էին՝ այստեղ մենք տանն ենք, եւ իրենց այստեղ վաղուց են սպասել:

Դեպի Արագածոտն մարզի Կարբի գյուղ ճանապարհն ընթանում է Արա լեռան եւ քառագագաթ Արագածի համայնապատկերը աչքի առաջ ունենալով, չնայած «Արա Գեղեցիկ եւ Շամիրամ» լեգենդի պատմությունը նրանց ծանոթ էր, սակայն տեսնելով լեռը եւ վերհիշելով լեգենդը եւ բազում հարցերի պատասխաններ ստանալով, հպարտության զգացում ապրեցին:

Կարբի գյուղի դպրոցը 110 տարվա պատմություն ունի, այն արեւմտահայ գրող Վահան Թեքեյանի անունն է կրում 1989 թվականից: Այցելությունը մեծ հետաքրքրություն առաջացրեց ամառվա արձակուրդները վայելող դպրոցի աշակերտների շրջանում, հավաքվել էր ուսուցչական ողջ կոլեկտիվը: Դպրոցի վաստակաշատ տնօրեն Արսեն Օհանյանը հանգամանակից պատմեց պետական միջոցներով հիմնովին վերանորոգված ու բարեկարգված դպրոցի մասին: Խնամված դասասենյակները այնքան հրապուրիչ թվացին, որ բոլորը դաս անելու ցանկությամբ զբաղեցրին աթոռները: Պրն. Օհանյանը ջանասիրաբար ներկայացնում էր դպրոցի աշակերտների ուսումնական առօրյան: Հատկապես տպավորիչ էր ռազմական պատրաստականության դասասենյակը, որը հագեցած էր նոր մեթոդական պիտույքներով: Այստեղ ռազմական նախնական գիտելիքներ են ստանում տղաներն ու աղջիկները: Թեքեյանցիները մասնակցեցին պարապմունքին: Իսկ դպրոցի համերգասրահում՝ ի պատիվ Արշակ Տիգրանյան վարժարանի շրջանավարտների, դպրոցի շքանշանակիր եռաձայն երգչախումբը կատարեց հայ դասական եւ ժամանակակից երգահանների ստեղծագործություններ:

Մթնոլորտը անմիջական ու հայկական էր, իսկ բաժանման պահը՝ մտերմիկ ու ջերմ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ 03-07-2009